Հավելված N 1.2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2346- Ա որոշման

ՌԻՍԿԵՐԻ ՄԱՏՐԻՑ

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
Մրցույթին բնորոշ ռիսկեր									
1.	Չկայացած կամ բողոքարկված մրցույթ	Հայտերի անբավարար թիվ, թերի հայտեր, իրավական գործողություններ, մրցույթներում խարդախության ռիսկ և այլն	100%	0%	0%-15%	Չափավոր	Կարող է հետաձգվել ծրագրի մեկնարկի ամսաթիվը (և ի վերջո օգուտների ժամանակին իրացումը)՝ պայմանավորված մրցույթի բողոքարկման դեպքում հնարավոր դատական գործընթացներով, մրցույթի վերակազմակերպման, իսկ չկայացած մրցույթի դեպքում՝ այն կրկին հայտարարելու անհրաժեշտությամբ: Դա նաև կհանգեցնի մրցույթի նախապատրաստման ուղղությամբ ջանքերի կրկնապատկման և պետական ծախսերի ավելացման:	-	Շուկայի վերաբերյալ խորհրդակցություն / շուկայի ուսումնասիրության գործընթաց և հնարավոր մասնակիցների վաղ ներգրավում:
2.	Ոչ բարեխիղճ մասնակիցների ընտրություն/ կամ ընտրված բարեխիղճ մասնակցի	Մասնակիցների ընտրություն կամ ընտրված այն մասնակիցների սեփականության	100%	0%	15-40 %	Բարձր	Ոչ բարեխիղճ մասնակիցների ընտրություն կամ ընտրված այն մասնակիցների սեփականության	-	1. ԱԱԾ-ի թույլտվությունը՝ մասնակիցների մասնակցության իրավունքն իրացնելու համար: 2. ԱԳՆ-ի և

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
	սեփականության իրավունքի փոխանցում	իրավունքների փոխանցում, որոնք կարող են վտանգավոր լինել ազգային անվտանգության տեսանկյունից:					իրավունքների փոխանցում, որոնք կարող են սպառնալիք լինել ազգային անվտանգության համար:		Պաշտպանության նախարարության թույլտվությունը՝ օտարերկրյա և օտարերկրյա սեփականություն համարվող մասնակիցների համար: 3. Որակավորման/ մասնակցության իրավունքի ձեռքբերման չափորոշիչներով սահմանափակվում է պետական սեփականություն համարվող ձեռնարկությունների մասնակցությունն այն դեպքում, երբ պետությունն իրականացնում է զգալի հսկողություն՝ տիրապետելով 100% բաժնետոմսերին, բաժնետոմսերի հսկիչ փաթեթին կամ բաժնետոմսերի զգալի մինորիտար փաթեթին: 4. Պայմանագրի գործողության ընթացքում մասնավոր գործընկերոջ ուղղակի կամ անուղղակի սեփականության իրավունքը չի փոխանցվում առանց Հայաստանի կառավարության (ՀԿ) գրավոր համաձայնության:
3.	Ոչ բավարար որակավորված մասնակիցների ընտրությունը	Կարող է պայմանավորված լինել ընտրության՝ ոչ պատշաճ մեթոդի կիրառմամբ կամ այլ	100%	0%	0%-15%	Բարձր	Կարող է անդրադառնալ ծրագրի արդյունքների որակի և ակնկալվող օգուտների իրացման կարողության վրա:	-	1. Անկախ երրորդ կողմը (խորհրդականներ) պետք է իրականացնի մրցույթների տեխնիկական գնահատում, տրամադրի աջակցություն՝

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		հանգամանքներով							մասնակիցների նախնական ընտրության ընթացակարգերում: 2. Ընտրության մեթոդները պետք է հիմնված լինեն ընդհանուր տնտեսական արժեքի վրա. առաջարկի որակը գնահատվում է գնից բարձր:
4.	Ավել վճարումը	Մասնավոր գործընկերոջ կողմից սահմանված բարձր գներ կամ մարժաներ	100%	0%	0%-15%	Չափավոր	Բարձր գների կամ մարժաների սահմանման հետևանքով տեղ է ունենում բյուջետային միջոցների գերածախս, ինչպես նաև ավելանում են սոցիալական և քաղաքական ռիսկերը:	-	1. Մասնավոր գործընկերոջ մրցութային ընտրությունը (մրցութային ընթացակարգ): 2. Հաղորդակցություն՝ ավելի շատ մասնակիցներ ներգրավելու նպատակով: 3. Հանրային գործընկերոջ կողմից այլ պետություններում թվայնացված անձնագրերի արժեքի վերաբերյալ իրականացված նախնական հետազոտություն (նախնական իրագործելիության ուսումնասիրության մաս):
Օրենսդրական և իրավական ռիսկերը									
5.	Ընդհանուր իրավական և օրենսդրական ռիսկերը	Նույնականացման քարտերի և անձնագրերի թողարկման օրենսդրական դաշտի/պահանջների փոփոխում: Ընթացիկ գործունեության կարգավորման դաշտում նորմատիվ իրավական հիմքի	100%	0%	50%-70%	Բարձր	Մատակարարին ներկայացվող նվազագույն պահանջների դեպքում կարող են հաշվի չառնվել ակնկալվող փոփոխությունները, հետևաբար մատակարարը կարող է հայցել փոփոխությունը և բարձրացնել գինը:	-	1. Հանրային գործընկերոջ ռիսկը կարող է նվազեցվել՝ ապահովելով, որ պայմանագրում հստակ սահմանվի, թե ինչն է համարվում փոփոխություն, ժամկետը լրանալու համապատասխան ամսաթիվը, և ինչն է համարվում հանրամատչելի: Սա տարբեր կլինի՝ ելնելով

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		փոփոխում (սակագներ, հարկեր և այլն): Հանրային գործընկերն ի սկզբանե կրում է օրենսդրության մեջ անսպասելի կատարվող այն փոփոխությունների ռիսկը, որոնք չեն եղել հանրամատչելի մինչև հայտերի ներկայացման ժամկետը լրանալու նշված ամսաթիվը, և որի հետևանքով մասնավոր գործընկերոջ կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարումն ամբողջությամբ կամ մասամբ անհնար է, հետաձգվել է կամ դարձել է ավելի թանկ, քան ակնկալվում էր (կամ որոնք անդրադարձել են դրա ներդրողների վրա)							ծրագրի բնույթից և համապատասխան օրենսդրական դաշտից: 2. Իրավական բնույթի փոփոխությունները խստորեն վերահսկվում են պայմանագրի դիտանցման հարցերով կոմիտեի կողմից: 3. Մասնավոր գործընկերոջ հետ հաստատված հաղորդակցական կապեր՝ նրա գործառնությունների վրա ազդեցությունը քննարկելու/դրա վերաբերյալ բանակցություններ վարելու նպատակով: 4. Մատակարարին ներկայացվող նվազագույն պահանջները ներառում են այն պահանջները, համաձայն որոնց՝ ծառայությունները պետք է համապատասխանեն կոնկրետ չափանիշների վերջին տարբերակներին, այսպիսով, մասնավոր գործընկերը պարտավոր է ապահովել ծառայությունների արդիականացումը, ինչից հետևում է, որ եթե փոփոխություններում արտացոլվում է միայն միջազգային չափանիշի փոփոխությունը, ապա այն չի համարվում փոփոխություն:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
									5. Առաջարկվում է նույնականացման համակարգի նորմատիվ իրավական դաշտը թարմացնել մինչև մրցույթի անցկացումը:
6.	ՊՄԳ պայմանագրի հետ կապված կոնկրետ իրավական ռիսկերը	Պայմանագրի և ծրագրի շրջանակներում այլ պայմանագրային հարաբերությունների հետ կապված իրավական ռիսկերը (կողմերի կողմից պարտավորությունների չկատարումը, պայմանագրի գործողության վաղաժամկետ դադարեցումը, գույքի ոչ ժամանակին փոխանցումը, պայմանագրով առանձին հարցերի չկարգավորումը կամ դրանց կարգավորման ոչ բավարար մակարդակը և այլն)	50%	50%	25%-40%	Բարձր	Ազդեցության մակարդակը կարող է տարբեր լինել՝ կախված կոնկրետ իրավական ռիսկից, օրինակ՝ որոշ դեպքերում դրա հետևանքը կարող է լինել ծրագրի մեկնարկի ձգձգումը, այլ դեպքերում դրա հետևանքը կարող է լինել ծրագրի ձախողումը և գործառնությունների դադարեցումը:	-	1. Անկախ երրորդ կողմը (խորհրդակաները) պետք է տեխնիկական աջակցություն տրամադրի ՊՄԳ պայմանագիրը կազմելու հարցում: 2. Պայմանագրի նախագծի շուրջ խորհրդակցություններ են անցկացվում շուկայի մասնակիցների հետ: 3. ՀԿ-ի համապատասխան մարմինները (համաձայն ՊՄԳ կարգավորման) պետք է գործուղեն Կառավարության իրավասու մասնագետներին՝ պայմանագրի կազմման և վերանայման գործընթացում համագործակցություն իրականացնելու և մասնակցություն ունենալու համար
Ծրագրի նախագծումը և կազմումը									
7.	Ծրագրի ոչ պատշաճ նախագծումը	Ծրագրի նախագիծը կարող է լինել ոչ պատշաճ գրասենյակների, գույքի, սարքավորումների, գործառնությունների, տեխնոլոգիաների ընտրության առումով և	25%	75%	25%-40%	Բարձր	Ոչ պատշաճ նախագծի հետևանքով կարող են ավելանալ ծախսերը (օրինակ՝ անարդյունավետ գործընթացներ, ընտրված անարդյունավետ տեխնոլոգիաներ, աշխարհագրական ցանցի	**1,640,000** (հաշվարկել է՝ հաշվի առնելով ԿԱՊԾԱԽՍ-երի ավելացման հավանակա-նությունը. դիտարկվել են	1. Տեխնիկական պահանջները ներկայացվում են հնարավոր մասնակիցների հետ շուկայի նախնական հաղորդակցման փուլում: 2. Մասնակիցներից պահանջվելու է մրցույթի

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		այլն: Հանրային գործընկերոջ նպատակն է, որպես կանոն, մրցութային փաստաթղթերում սահմանել արդյունքամետ ընդգրկուն մասնագիր՝ պահանջելով, որ մասնավոր գործընկերը նախագծի և կազմի ծրագիրն այնպես, որ բավարարվեն տեխնիկական բնութագրերը, և ապահովվի կիրառվող իրավական պահանջներին, ոլորտի լավագույն գործելակերպի չափանիշներին և կիրառելիության դեպքում՝ որակի նվազագույն չափանիշներին համապատասխանությունը: Սա հնարավորություն է ընձեռում մասնավոր հատվածին նախագծում ներդնելու նորարություններ և բարձրացնելու դրա արդյունավետությունը: Այս մոտեցման դեպքում մասնավոր գործընկերոջ հիմնական					անարդյունավետ նախագիծ), Ծառայությունների մատուցման պայմանների (ԾՄՊ) չկատարում (ինչը հանգեցնում է եկամուտների նվազեցման): Հանրային գործընկերը պետք է կրի նրա կողմից տրամադրված ոչ ճշգրիտ տեխնիկական տեղեկությունների ռիսկն այնքանով, որքանով նախագծման նպատակներով մասնավոր գործընկերոջը թույլատրվել է ապավինել դրանց: Եթե այդ ռիսկն իրականություն է դառնում, ապա դա կարող է հանգեցնել փոխհատուցման պահանջի:	գերածախսերի հետևանքների մի քանի տարբերակ)	ընթացքում ներկայացնել նախնական նախագծերը:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		պատասխանատվությունը կլինի համակարգի պատշաճության ապահովումը և դրա համապատասխանությունը վերնարդյունքներին /տեխնիկական բնութագրերին:							
8.	Տեխնիկական հնացածության ռիսկը	Որոշ տեխնիկական ենթակառուցվածներ, որոնք ծառայության համար դառնում են ոչ պիտանի, կամ ծառայությունների որակը վատթարանում է՝ ծրագրի ընթացքում տրամադրվող առավել արդիական ծառայությունների համեմատ:	0 %	100 %	0%-15%	Չափավոր	Սա կարող է անդրադառնալ մասնավոր գործընկերոջ գործառնությունների արդյունավետության վրա և հետևաբար հանգեցնել ՀՆԱ-ի նվազեցման: Հանձնման փուլում տեխնիկապես հին ենթակառուցվածքները կազդեն Կառավարության հետագա գործառնությունների արդյունավետության վրա:	-	1. Հանձնման պահանջները ներառվել են Պայմանագրում՝ Կառավարությանը հանձնվող ենթակառուցվածքի լավ վիճակն ապահովելու պարտավորություն ստանձնելու համար (պետք է ներառել լավ վիճակը սահմանելու կոնկրետ պահանջ): 2. Պայմանագրում սահմանվում են լրացուցիչ վճարներին ներկայացվող նոր պահանջների ներառման շուրջ բանակցություններ վարելու վերաբերյալ դրույթներ:
9.	Նորարարության հետ կապված ռիսկը	Նորարարության հետ կապված ռիսկը նշանակում է նոր գաղափարներ, տեխնոլոգիաներ կամ բիզնես մոդելներ գործածելու հնարավոր ֆինանսական և գործառնական հետևանքները: Դա այն	0 %	100 %	0%-15%	Չափավոր	Սա կարող անդրադառնալ մասնավոր գործընկերոջ գործառնությունների արդյունավետության վրա և հետևաբար հանգեցնել ՀՆԱ-ի նվազեցման:	-	1. Տեխնիկական պահանջները, որոնք ձևակերպվել են՝ գործառնություններում կիրառվող այն տեխնոլոգիաները և կատարված այլ բարելավումներ հաշվի առնելու համար, որոնք լիարժեք մշակված են և

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		ռիսկն է, որը կապված է նորարարական գործունեության արդյունքների անորոշության և անկանխատեսելիության հետ: Նորարությունը ենթադրում է նոր արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների մշակում, որոնք այժմ չեն շրջանառվում շուկայում, կամ գոյություն ունեցող արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների բարելավված տարբերակներ: Երբ ընկերությունները ցանկանում են իրականացնել նորարարություններ, ապա նրանք պետք է գիտահետազոտական աշխատանքներում ներդնեն ժամանակ, ռեսուրսներ և գումար, ինչը կարող է լինել ծախսատար և ժամանակատար: Ավելին, չկա որևէ երաշխիք, որ նորարարությունները կունենան հաջող ընթացք՝ հանգեցնելով							փորձարկվել են շուկայում: 2. Շուկայի ուսումնասիրություն հնարավոր մասնակիցների հետ՝ հավաստիանալու համար, որ տեխնիկական պահանջները համապատասխանում են համաշխարհային շուկայի չափանիշներին և գործելակերպերին:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		ռեսուրսների և ներդրումների հնարավոր կորստի							
10.	Ծրագրի ոչ պատշաճ տեխնիկական բնութագրերը	Ծրագրի կատարման կանխատեսումները կարող են լինել անիրական (այսինքն՝ ապահովումն անհնար լինի)	25%	75%	0%-15%	Չափավոր	Ծրագրի ոչ պատշաճ տեխնիկական բնութագրերի հետևանքով մասնավոր գործընկերոջ համար կարող է դժվարանալ կատարել սահմանված ԾՄՊ-ն/պայմանագրային պարտավորությունը, ինչը հետևաբար կարող է հանգեցնել մասնավոր գործընկերոջ համար վճարների (եկամուտների) նվազեցման: Ինչպես նաև Ծրագրի ոչ պատշաճ տեխնիկական բնութագրերի հետևանքով (օրինակ ԾՄՊ-ի չափազանց խիստ պահանջներ) կարող են ներկայացվել ավելի բարձր գնային առաջարկներ, իսկ հանրային գործընկերոջ համար կարող են ավելանալ ծրագրի ծախսերը: Որոշ դեպքերում մասնավոր կողմի գործունեության համար կարող է պահանջվել հանրային գործընկերոջ աջակցությունը: Այսպիսի դեպքերում ԾՄՊ-ի չկատարման համար վճարների նվազեցում չի	-.	Հնարավոր մասնակիցների հետ շուկայի վերաբերյալ խորհրդակցություններ:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
							կիրառվի:		
11.	Ծրագրի ավարտի ուշացումը	Նախագծման և կազմման ռիսկերը սերտորեն կապված են նախատեսված գրասենյակների՝ ժամանակին և բյուջեի շրջանակներում շահագործման հանձնելու ռիսկի հետ: Մինչև համապատասխան աշխատանքների ավարտման ամսաթիվը, ինչպես օրինակ՝ ֆինանսական փակման վերջնաժամկետին Ծրագրի հանձնման ձգձգումների պատճառները կարող են տարբեր լինել, օրինակ՝ շինարարական նյութի և սարքավորումների բացակայություն, առաքման ուշացումներ, ծրագրի իրականացման ժամանակացույցից շեղումներ կամ դրանում տեղ գտած սխալներ, ինչպես նաև եղանակային պայմաններ, քաղաքացիական անկարգություններ կամ գործադուլներ և հանրային գործընկերոջ կամ կառավարության	25%	75%	25%-40%	Չափավոր	Մասնավոր գործընկերոջ համար համապատասխան աշխատանքների ավարտման ամսաթվից ուշացնելու հետևանքներն են ակնկալվող եկամտի կորուստը՝ պայմանավորված երկարաձգված ընթացիկ շինարարական աշխատանքների ծախսերի և ֆինանսական ծախսերի ավելացմամբ: Սա կարող է հանգեցնել Ծրագրի զուտ ներկա արժեքի նվազեցման: Քանի դեռ չի ներդրվել Ծրագիրը, Կառավարությունը կարող է շարունակել իրականացնել իր նախկին գործառնությունները, սակայն ծայրահեղ դեպքերում Ծրագրի ավարտի ուշացմամբ կարող է սահմանափակվել ՀԿ-ի՝ գործառնությունների անխափան իրականացումը շարունակելու կարողությունը (օրինակ՝ մատակարարված նյութերի պակասի պատճառով): Հանրային գործընկերը ստանձնում է ռիսկերն այն դեպքերում, երբ Ծրագրի ավարտման ուշացումը պայմանավորված է ՀԿ-ի	**2,370,000** (հաշվարկվել է՝ հաշվի առնելով Ծրագրից եկամուտ ստանալու կորցված հնարավորությունը. դիտարկվել են հետևանքների մի քանի տարբերակ՝ տեղի ունենալու սահմանված հավանականությամբ)	Պայմանագրի մշտադիտարկման հանձնաժողովի կողմից պայմանագրի կատարման ընթացքի խիստ մշտադիտարկում

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		գործողություններ: Մասնավոր գործընկերը, որպես կանոն, կրում է ձգձգումների ռիսկն այնքանով, որքանով դրանք պայմանավորված չեն հանրային գործընկերոջ կողմից Ծրագրի ավարտման համար անհրաժեշտ հանձառությունները չկատարելու հանգամանքով:					կողմից հանձնառությունների չկատարմամբ (օրինակ՝ համաձայնեցված ժամկետում գրասենյակների հանձնում, փաստաթղթերի բլանկների համար գեղագիտական դիզայնի կազմման մասնագրերի ներկայացում):		
12.	Ֆինանսական միջոցների գերօգտագործումը (գերածախս)	Նախագծման և կազմման ռիսկերը սերտորեն կապված են նախատեսված գրասենյակների՝ ժամանակին և բյուջեի շրջանակներում շահագործման հանձնելու ռիսկի հետ: Ֆինանսական միջոցների գերօգտագործումը (այսինքն՝ ֆինանսական փակման վերջնաժամկետում ծրագրի ֆինանսական մոդելում ենթադրաբար կրած շինարարական ծախսերը գերազանցող ծախսերը) կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով,	25%	75%	25%-40%	Չափավոր	Մասնավոր գործընկերոջ համար սա կարող է հանգեցնել ծրագրի ՀՆԱ-ի նվազեցման: Հանրային գործընկերը կրում է ռիսկերն այն դեպքերում, երբ գերածախսը պայմանավորված է հանրային գործընկերոջ կողմից իր հանձնառությունների չկատարմամբ (օրինակ՝ հանրային գործընկերոջ մեղքով Ծրագրի իրականացման ուշացումներ):	**2,190,000** (հաշվարկել է՝ հաշվի առնելով ԿԱՊԾԱԽՍ-երի ավելացման հավանականությունը. դիտարկվել են գերածախսերի հետևանքների մի քանի տարբերակ)	1. Պայմանագրի դիտացման կոմիտեի կողմից պայմանագրի կատարման ընթացքի խիստ դիտանցում 2. Շինարարական նյութերի մատակարարման՝ հաստատուն գնով պայմանագրեր 3. Չնախատեսված ծախսերի համար նախատեսված պայմանագրի դրույթներ 4. Որոշ շուկաներում ռիսկը համարվում է մասնավոր գործընկերոջ կողմից կառավարելի պարտավորությունները վստահելի և փորձառու ենթակապալառուներին լիարժեք փոխանցելու, պատշաճ ժամանակացույց տրամադրելու և չնախատեսված ծախսերի

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		ինչպես օրինակ՝ շինարարարության նախահաշվում կատարված սխալներ, նյութերի արժեքի ավելացում, հանրային գործընկերոջ կամ կառավարության գործողություններ, շինարարության ծրագրից շեղումներ, կամ Ծրագրի կատարման ուշացում կամ հնարավոր ուշացումների նվազեցում: Մասնավոր գործընկերը պայմանագրի համաձայն կրում է ծախսերի ավելացման ռիսկն այնքանով, որքանով դրանք պայմանավորված չեն անհաղթահարելի ուժով, փոխհատուցման պահանջներով (օրինակ՝ տոպոգեոդեզիական հետախուզության չենթարկված վայրի պայմանների հետ կապված) և չեն կարգավորվում են այլ համաձայնեցված դրույթներով:							բյուջե ունենալու հնարավորության դեպքում, ինչպես նաև չկատարման ռիսկից պատշաճ պաշտպանություն ապահովելու դեպքում: 5. Մասնավոր գործընկերը կարող է նվազեցնել ենթակապալառուների կողմից չկատարման ռիսկը՝ ապահովելով ենթակապալառուներից պատշաճ պաշտպանությունը (օրինակ՝ մայր ընկերության երաշխիքներ և (կամ) պարտավորությունների կատարումն ապահովելու միջոցներ): 6. Հանրային գործընկերը երբեմն կարող է ինքնուրույն հայցել լրացուցիչ երաշխիքներ՝ այդ ծախսերի մարումն ապահովելու համար:
13.	Ակտիվների հասանելիությունը և օգտագործման	Մասնավոր գործընկերոջն ակտիվների	0%	100%	0%-15%	Բարձր	Սա կարող է հանգեցնել ծրագրի իրականացման ձգձգման		ՊՄԳ-ի ծրագրի նախագծման փուլում փոխանցման պայմանների

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
	պայմանները	կառավարման և (կամ) հողամասերի օգտագործման իրավունքների փոխանցման հետ կապված ռիսկերը							մանրամասն վերլուծությունը և մշակումը
Գործառնական									
14.	Ավելացող գործառնական ծախսեր	Ծրագրի շահագործման փուլի ընթացքում ակնկալվող ապագա ծախսերի ոչ ճիշտ գնահատումը: Գործառնական փուլում ավելացող ծախսերը և ուշացումները կարող են բազմաթիվ պատճառներ ունենալ՝ սկսած տեխնիկական սպասարկման ծախսերի հաշվարկներից մինչև ծայրահեղ եղանակային պայմանների հետևանքով գործառնական պայմանների փոփոխությունները: Գնաճի հետ կապված ճշգրտումներից բացի՝ մասնավոր գործընկերը, ընդհանուր առմամբ, կրում է աշխատանքներին խոչընդոտող և (կամ) մոդելավորված ծախսերի համեմատ (ներդրողի կողմից	0%	100%	25%-40%	Չափավոր	Սա կարող է հանգեցնել ծրագրի զուտ բերված արժեքի նվազման:	**7,640,000** (հաշվարկվել է Ծրագրի գործողության ժամկետում ԳՈՐԾՃԱԽՍ-երի ավելացման հնարավորության հիման վրա. դիտարկվել են ծախսերի գերակատարման հետևանքների մի քանի տարբերակներ)	Ծրագրի իրագործմանը նախորդող փուլում ծրագրի ծախսերի մասով շուկայի վերաբերյալ խորհրդատվություն:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		հաշվարկված ծախսերը հայտ ներկայացնելու պահին) ավելի խոշոր ծախսերի հանգեցնող իրադարձությունների ռիսկերը այնքանով, որքանով այդ ռիսկերը պատասխանատվությունից ազատման, անհաղթահարելի ուժի ազդեցության, փոխհատուցման դրույթներին չեն վերաբերում և չեն վերացվում այլ՝ համաձայնեցված դրույթների միջոցով:							
15.	Մատակարարին փոխելու անկարողություն	Արտոնագրված ծրագրաշարից, սարքաշարից և համակարգերից՝ երկու կողմերի կախվածության հետ կապված ռիսկեր	0%	100%	25%-40%	Ցածր	Սա կարող է հանգեցնել կոնկրետ տեխնոլոգիական լուծումների համար գործառնական ծախսերի աճի. մատակարարին փոխելու անկարողության պատճառով մրցակցության բացակայությունը կարող է հանգեցնել տեխնիկական սպասարկման կամ լիցենզավորման ծախսերի ավելացման:	-	Խորհրդակցություն մրցույթի հնարավոր մասնակիցների հետ՝ տեխնիկական պահանջները մշակելիս այնպիսի պահանջների մշակումը կանխելու համար, որոնք կարող են ենթադրել միայն հատուկ տեխնոլոգիական լուծումներ:
16.	Անվտանգության խախտում	Այդ թվում՝ ֆիզիկական և տեղեկատվական, ինչպիսիք են՝ Կիբերանվտանգության հետ կապված հարձակումները, մասնավոր կյանքի իրավունքի խախտումները, որոնք	0%	100%	25%-40%	Բարձր	Սա կարող է հանգեցնել պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման տույժերի կամ, որոշ դեպքերում, ընդհատված գործառնությունները վերականգնելու հետ կապված լրացուցիչ	Պայմանագրով նախատեսված տույժերի չափով:	1. Պայմանագրով նախատեսված ուղղակի և անուղղակի ծախսերը ծածկելու՝ մասնավոր գործընկերոջ պարտավորությունը: 2. Պայմանագրով նախատեսված՝ ապահովագրությանը

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		հանգեցնում են անվտանգության խախտումների					ծախսերի:		ներկայացվող պահանջները: 3. Երրորդ կողմերի կողմից անվտանգության (այդ թվում՝ կիբերանվտանգության) միջոցների սերտիֆիկացմանը ներկայացվող պահանջները, որով հաստատվում է տեխնիկական առաջադրանքում ներառված, նախատեսված տեխնիկական աուդիտներով գնահատված համապատասխանությունը: 4. Որակավորման չափորոշիչները պետք է ներառեն չկատարված պայմանագրերի և դատավարությունների պատմությունը, այդ թվում՝ անվտանգության խախտումների համար:
17.	Կապալառուի կողմից աշխատանքների թերի (անորակ) կատարումը	Ներառյալ արտադրական ցուցանիշներին չհամապատասխանելը և ծառայությունների ցածր որակը՝ պայմանագրով նախօրոք համաձայնեցված (պահանջվող) որակի համեմատ, այդ թվում՝ սահմանված ծավալով ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի	0%	100%	0%-15%	Չափավոր	Սա կարող է սահմանափակել կառավարության և մասնավոր գործընկերոջ համար ծրագրի օգուտների իրացումը և կարող է հանգեցնել ԾՄՊ-ների չկատարման հետ կապված տույժերի:	Պայմանագրով նախատեսված տույժերի չափով:	Չկատարված ԾՄՊ-ների հիման վրա պայմանագրով սահմանված հնարավոր տույժերը:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		արտադրության և բաշխման կարողությունը՝ ԾՄՊ-ին համապատասխան:							
18.	Մատակարարման և օգտագործվող նյութերի պակաս	Մասնավոր գործընկերոջ կողմից աշխատանքային գործընթացի ոչ պատշաճ հսկողությամբ կամ ցանկացած այլ գործոններով պայմանավորված՝ ենթակապալառուների կողմից անորակ աշխատանքի հետ կապված ռիսկերը	0%	100%	25%-40%	Ցածր	Սա կարող է սահմանափակել մասնավոր գործընկերոջ՝ ԾՄՊ-ները կատարելու կարողությունը, և հանգեցնել տույժերի (վճարների իջեցման):	Պայմանագրով նախատեսված տույժերի չափով:	Չկատարված ԾՄՊ-ների հիման վրա պայմանագրով նախատեսված հնարավոր տույժերը:
19.	Դադարեցված գործառնությունների ռիսկը (վերադարձման փուլ)	Վերադարձման փուլում անթերի գործընթաց ապահովելու անկարողության ռիսկը կամ աշխատանքը շարունակելու համար ոչ պատշաճ վիճակում գտնվող ակտիվի վերադարձման (մասնավոր գործընկերոջը փոխանցման) ռիսկը: Ռիսկերի մեծ մասը կրում է մասնավոր գործընկերը, սակայն գործառնությունները կարող են դադարեցվել պետական գործընկերոջ՝ գործառնությունների կատարումը հաջողությամբ	25%	75%	25%-40%	Չափավոր	Եթե մասնավոր գործընկերը չի կատարել փոխանցմանը ներկայացվող պահանջները, դա կարող է հանգեցնել նրա նկատմամբ տույժերի սահմանման: Հայաստանի կառավարության համար դա կարող է հանգեցնել անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման հետ կապված գործառնությունների ընթացքի խաթարման:	Պայմանագրով մասնավոր գործընկերոջ համար նախատեսված տույժերի չափով:	1. Պայմանագրում մանրամասն սահմանվում է փոխանցման ընթացակարգը: 2. Ակտիվների որակի պահպանման համար սահմանված ներդրումային պարտավորությունները: 3. Մասնավոր գործընկերոջ կողմից փոխանցման հետ կապված պահանջները չկատարելու դեպքում նախատեսվող տույժերը: 4. Պայմանագրի գործողության նկատմամբ մոնիտորինգի գործընթաց, որը նախատեսված է վաղ նախազգուշացման նշանները հասկանալու համար:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		ստանձնելու անկարողության պատճառով (օրինակ՝ վատ կառավարում և այլն): Արդյունավետ փոխանցումը դյուրացնելու համար պետական գործընկերը պետք է պատրաստվի նախօրոք, տեխնիկական աուդիտ անցկացնի՝ նախքան վերադարձնելը և համագործակցի մասնավոր գործընկերոջ հետ՝ գործառնությունները շարունակելու համար:							
20.	Գործառնություն-ների դադարեցման ռիսկը (վերադարձման փուլ)	Գործառնությունների կատարման փուլում անթերի գործընթաց ապահովելու անկարողությունը: Սա նաև ներառում է սեփականատիրոջ փոփոխության հետ կապված հարցը:	0%	100%	25%-40%	Ցածր	Եթե մասնավոր գործընկերը չի կատարել գործառնություններին ներկայացվող պահանջները, ապա դա կարող է հանգեցնել նրա նկատմամբ տույժերի սահմանման: Հայաստանի կառավարության համար դա կարող է հանգեցնել անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման հետ կապված գործառնությունների ընթացքի խաթարման, նախատեսված օգուտները չիրացնելուն:	Պայմանագրով մասնավոր գործընկերոջ համար նախատեսված տույժերի չափով:	1. Պայմանագրով նախատեսված հնարավոր տույժերը չկատարված պարտավորությունների դեպքում, եթե չկատարումը պայմանավորված չէ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ: 2. Տեխնիկական առաջադրանքը ներառում է մասնավոր գործընկերոջ կողմից գործունեության շարունակականության համապատասխան պլան կազմելու և կատարելու պահանջը: 3. Լավ կազմված մրցութային փաստաթղթերով (ՈՀ

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
									(Որակավորման հարցման), ԱՀ (առաջարկի հարցման) ՊՄԳ պայմանագիր) կներկայացվեն Հատուկ նշանակության գործիքի (ՀՆԳ) վերաբերյալ պահանջները (այդ թվում՝ նախքան պայմանագրի կնքումը և պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ՀՆԳ սեփականության կառուցվածքի մասին կանոնները, ժամկետը, որի ընթացքում փոփոխությունների կատարում չի թույլատրվում, սեփականության իրավունք շնորհող անձի կողմից սեփականության փոփոխությունների նախնական հաստատման ընթացակարգերը և այլն)՝ այս ռիսկերը հասցեագրելու համար:
21.	Համակարգի խափանումներ	Համակարգի կամ դրա բաղադրիչների խափանումներ, որոնք հանգեցնում են գործառնությունների դադարեցման	0%	100%	0%-15%	Չափավոր	Սա կարող է ազդել մասնավոր գործընկերոջ՝ սահմանված ԾՄՊ-ներին համապատասխանելու կարողության վրա:	Պայմանագրով նախատեսված տույժերի չափով:	1. Որպես ԱՆՀ-ի պահանջների մաս՝ շարունակական սպասարկման և որակի ապահովման ծառայությունների մատուցում: 2. Տեխնիկական առաջադրանքը ներառում է մասնավոր գործընկերոջ կողմից գործունեության շարունակականության համապատասխան պլանը

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
									կազմելու և կատարելու պահանջը:
22.	Տաղանդների ներգրավում	Նոր տեխնոլոգիական համակարգերի մշակման և պահպանման համար անհրաժեշտ բարձրակարգ մասնագետների ներգրավման անհնարինության ռիսկը	0%	100%	0%-15%	Չափավոր	Սա կարող է հանգեցնել մասնավոր գործընկերների կողմից՝ սահմանված ԾՄՊ-ները կատարելու կարողության կամ ընթացիկ գործառնությունների ավելացող ծախսերի ավելացման (սխալներն ուղղելու անհրաժեշտության և այլ պատճառներով):	-	Ռիսկի մակարդակը ցածր է, քանի որ տեղում բարձրակարգ մասնագետների պահանջարկը սահմանափակ է, մինչդեռ ակնկալվում է, որ միջազգային փորձն ու վերապատրաստումը պետք է տրամադրվեն միջազգային թիմի կողմից:
Առևտրային									
23.	Ծառայությունների ծավալի հետ կապված ռիսկերը	Մասնավոր գործընկերը վարձատրվում է յուրաքանչյուր ծառայության համար առանձին: Միևնույն ժամանակ, Կառավարությունը պետք է ապահովի ծառայությունների որոշակի նվազագույն ծավալ՝ մասնավոր գործընկերոջ համար ծրագրի կենսունակությունը երաշխավորելու համար: Պահանջարկի հետ կապված որոշակի ռիսկեր կարող են առաջանալ այն դեպքում, երբ մասնավոր գործընկերոջը	75%	25%	25%-40%	Չափավոր	Եթե չի ներդրվել շահույթի բաշխման մեխանիզմը, պետական գործընկերն է կրելու ռիսկը, ինչը նշանակում է, որ պետական մարմնից կպահանջվի փոխհատուցման վճարներ վճարել մասնավոր գործընկերոջը ծառայությունների փաստացի ծավալը նախօրոք համաձայնեցված ծավալից փոքր լինելու դեպքում: Այլապես, եթե առևտրային գործունեությունը դադարեցվում է կարգավորման կամ պետական գործընկերոջը, կամ կառավարությանը վերագրվող այլ	Ծավալի հետ կապված ռիսկի գնահատման նպատակներով դիտարվել են երկու դեպք՝ i) ՊՄԳ պայմանագրի շրջանակներում ներդրված մեղմացման մեխանիզմով և ii) առանց դրա: Մի կողմից, առաջին տարբերակը ենթադրում է նվազագույն ծավալի երաշխիքի տրամադրում մասնավոր գործընկերոջը	Պայմանագրով նախատեսված ծավալի երաշխիքը, շահույթի բաշխման վճարային մեխանիզմը:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		թույլատրվում է առևտրային գործունեություն իրականացնել (պայմանագրով նախատեսված հիմնական ծառայությունից բացի), այնուամենայնիվ, սա կազմում է ծրագրով ակնկալվող եկամտի մինչև 20 %-ը:					գործոնների պատճառով, պայմանագիրը նախատեսում է հետևանքների առաջացում: Սա կարող է ներառել որոշակի դրույթների, այդ թվում՝ գնի փոփոխությունը:	ապահովելու նվազագույն հոսք առնվազն իրենց ծախսերը ծածկելու համար: Մյուս կողմից, առաջին տարբերակը նաև ներառում է շահույթի բաշխման մեխանիզմը, որը թույլ է տալիս Մասնավոր գործընկերոջը Հանրային կողմի հետ օգտվել օգուտներից: Այսպիսով, ծավալի հետ կապված ռիսկի մեծությունը Ծրագրի գործողության ժամկետում գնահատվում է **0** (զրո՝ շահույթի բաշխման մեխանիզմի դրական ազդեցության պատճառով): Երկրորդ տարբերակը չի ենթադրում ռիսկի մեղմացման մեխանիզմների առկայությունը:	

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
								Նախնական գնահատա-կանների հիման վրա կարող ենք ասել, որ ծավալի նվազագույն երաշխիքի նվազումը 1,6 միլիոն անձնագրից 1 միլիոն անձնագրի (գնահատված ծավալներից հանած 50%) կարող է հանգեցնել ծառայություններ ի գնի 37,9% ավելացման, ինչը կարող է ծրագրի գործողության ժամկետի ընթացքում կառավարության համար արժենալ մոտ **USD 83,990,000** ԱՄՆ դոլարի լրացուցիչ գումար:	
Ֆինանսական և մակրոտնտեսական									
24.	Ֆինանսավորման առկայությունը	Ծրագրի ֆինանսական արդյունավետությունը զգալիորեն կախված է դրա իրականացման	0%	100%	0%-15%	Ցածր	Ֆինանսավորում ձեռք բերելու ունակությունն ազդում է ներդրողի համար կապիտալի արժեքի վրա՝	-	Լավ վարկանիշ ունեցող միջազգային ներդրողներ ներգրավելու համար թափանցիկ ընտրական

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		համար պահանջվող ներգրավվող կապիտալի չափից, ինչը ներառում է ինչպես սեփական միջոցների, այնպես էլ պարտքի ֆինանսավորումը: Դրա մեկ այլ մաս մասնավոր գործընկերոջ՝ ողջամիտ ժամկետում այդպիսի ֆինանսավորում ներգրավելու ունակությունն է:					այդպիսով նաև ներդրողի համար ծրագրի ընդհանուր արժեքի, ակնկալվող եկամտաբերության նորմի և այլ ցուցանիշների վրա: Պետական գործընկերոջ համար այն կարող է ազդել Ծրագրի մեկնարկի հետաձգման, ուստի նաև Ծրագրի օգուտների գեներացման վրա:		ընթացակարգ, կայուն ՊՄԳ պայմանագրի ներկայացում, ծավալի երաշխիքի առկայություն. բոլոր այս միջոցները ավելացնում են մասնավոր գործընկերոջ՝ ողջամիտ ժամկետում բավարար ֆինանսական միջոցներ ներգրավելու կարողությունը: Հետևանքների մեղմացման հնարավոր մեխանիզմներից մեկը կարող է ենթադրել, որ հայտը ներկայացնելու չափորոշիչներից մեկը կարող է լինել մասնավոր գործընկերոջ կողմից առնվազն սկզբնական որոշակի սեփական կապիտալ ունենալը, ինչը թույլ կտա խուսափել չափազանց շատ փոխառու միջոցների օգտագործմամբ մեխանիզմներից:
25.	Տոկոսադրույքի ռիսկ	Որոշ շուկաներում (հատկապես պակաս կայուն) հնարավոր է տոկոսադրույքի տատանումների ռիսկի առաջացումը՝ տոկոսադրույքի փոփոխականության կամ երկարաժամկետ հեջավորման հնարավորության բացակայության պատճառով: Որպես կանոն, մասնավոր	0%	100%	25%-40%	Չափավոր		Հայտի ներկայացման փուլում սահմանված գների և ծրագրի գործողության ֆինանսական փակման միջև ընկած զգալի ժամանակահատվածի պատճառով տոկոսադրույքի անբարենպաստ փոփոխությունը	Հնարավոր մեղմացման միջոցները կարող են ներառել հեջավորման համաձայնությունն այնքանով, որքանով դա հնարավոր կամ անհրաժեշտ է համապատասխան շուկայում: Դա պետք է ապահովի մասնավոր գործընկերոջ կողմից վճարման ենթակա տոկոսադրույքի արդյունավետորեն ֆիքսված լինելը՝ տատանվողի

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		գործընկերն է կրում տոկոսադրույքի տատանումների ռիսկը ծրագրի գործողության ընթացքում, սակայն սա կախված կլինի կոնկրետ ծրագրից և դրա իրականացման օրենսդրական դաշտից:						կհանգեցնի կապիտալի ընդհանուր արժեքի աճին:	փոխարեն, և պաշտպանում է այն տոկոսադրույքի անբարենպաստ շարժերից: Նման հեջավորման արժեքը պայմանագրի գնային առաջարկի մաս կլինի:
26.	Գնաճ	Գնաճի պատճառով շինարարության և գործառնական ծախսերի ավելացման ռիսկ: Գնաճի պատճառով շինարարության ծախսերի ավելացած ռիսկը կարող է կրել մասնավոր գործընկերը, որը, որպես կանոն, ծրագրի արժեքի մեջ է ներառում այս ռիսկն այն շուկաներում, որտեղ այդպիսի ռիսկը կանխատեսելի և քանակապես որոշելի է: Գործառնական փուլում գնաճի ռիսկը, որպես կանոն, կրում է պետական գործընկերը:	100%	0%	25%-40%	Չափավոր	Գնաճի մակարդակի շեղումը ազդում է ծրագրի արժեքի վրա և հանգեցնում բյուջետային միջոցների գերածախսի, եթե ռիսկը կրում է պետական կողմը	**3,980,000** (Հաշվարկված է Հանրային գործընկերոջ համար վերջնական օգտագործողի սակագնի և ինֆլյացիայով կշռված հայտի գնի խզվածքի / Կառավարության կողմից մատուցվող ծառայություններ ի՝ ինֆլյացիայի տատանումների արդյունքում իրական գնի գնի փոփոխություններ ի հիման վրա: Երկու գնման տարբերակների համար: Սցենար 1 - բազային, կանխատեսված գնաճ, Սցենար 2: + 10 % ինֆլյացիայի աճ,	Արժույթի փոխարժեքը կամ գնաճի դրույքաչափը կարող են ներառվել որպես գնի ցուցիչ: Որպես կանոն, մասնավոր գործընկերոջը վճարվող գումարը կարող է ներառել ինչպես ֆիքսված բաղադրիչ (երբ պարտքը հեջավորվել է), այնպես էլ փոփոխական բաղադրիչ, որը ներառում է բարձրացման գործակիցը, որով պայմանավորված է ծախսերի աճը:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
								Սցենար 3: + 20 % ինֆլյացիայի աճ):	
27.	Փոխարժեքի տատանումը	Ծրագրի ընթացքում փոխարժեքի դրույքաչափի փոփոխությունները, այսինքն՝ ՊՄԳ պայմանագրի վճարների արժույթից տարբեր արժույթով գործառնական ծախսերը: Փոխարժեքի դրույքաչափի ռիսկի բաշխումը ծրագրի գործողության ժամկետում կախված կլինի ծրագրի իրականացման համապատասխան օրենսդրական դաշտից և ծրագրի ծախսերի բնույթից: ՊՄԳ-ների մեծ մասում մասնավոր գործընկերը հայտ է ներկայացնում և վճարվում է մասնավոր գործընկերոջ կողմից, այդ երկրի ներպետական արժույթով: Այնուամենայնիվ, դրա արդյունքում կարող են առաջանալ արտարժույթով ծախսեր, և այդ ծախսերը կոնկրետ փոխարժեքի հիման վրա փոխարկվում են	0%	100%	25%-40%	Չափավոր	Փոխարժեքի տատանումն ազդում է ծրագրի ծախսերի վրա և հանգեցնում է մասնավոր գործընկերոջ ֆինանսական արդյունքների փոփոխության (ի վերջո նա կստանձնի ռիսկը և այն հաշվի կառնի ծառայության գնի մեջ) կամ բյուջեի միջոցների գերածախսի, եթե ռիսկը կրում է պետական կողմը:	**9,680,000** (Հաշվարկված է Հանրային գործընկերոջ համար վերջնական օգտագործողի սակագնի և ինֆլյացիայով կշռված հայտի գնի խզվածքի / Կառավարության կողմից մատուցվող ծառայություններ ի՝ ինֆլյացիայի տատանումների արդյունքում իրական գնի գնի փոփոխություններ ի հիման վրա: Երկու գնման տարբերակների համար: Սցենար 1 - բազային, կանխատեսված գնաճ, Սցենար 2: + 10 % ինֆլյացիայի աճ, Սցենար 3: + 20 % ինֆլյացիայի աճ):	Արժույթի փոխարժեքը կամ գնաճի դրույքաչափը կարող են ներառվել որպես գնի ցուցիչ: Որպես կանոն՝ մասնավոր գործընկերոջը վճարվող գումարը կարող է ներառել ինչպես ֆիքսված բաղադրիչ (երբ պարտքը հեջավորվել է), այնպես էլ փոփոխական բաղադրիչ, որը ներառում է բարձրացման գործակիցը, որով պայմանավորված է արժեքների աճը:

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		ներպետական արժույթի՝ գնային առաջարկի մեջ ներառման համար:							
Սոցիալական և քաղաքական									
28.	Հիմնական շահագրգիռ կողմերի դիմադրությունը	Ռիսկը ներառում է առաջարկված փոփոխությունների ազդեցությանը ենթարկված ցանկացած արտաքին կողմի, այդ թվում՝ կառավարության շահագրգիռ կողմերի և քաղաքացիների, Կառավարությունն առավել շահավետ դիրքում է գտնվում այս ռիսկերը կարգավորելու և դրանք նվազագույնի հասցնելու համար համապատասխան ռազմավարություն մշակելու տեսանկյունից:	100%	0%	0%-15%	Չափավոր	Սրա արդյունքում կարող են ծավալվել երկարատև քննարկումներ, ձեռք բերվել համաձայնություններ, որոնք կարող են ազդել նախագծման և կառուցման փուլի վրա կամ ծառայությունների ծավալի վրա (տե՛ս «ծավալի հետ կապված ռիսկ» բաժինը):	-	1. Սերտ համագործակցություն կառավարության բոլոր մակարդակներում՝ ծրագրի վաղ փուլից սկսած: 2. Ստեղծվել է Պայմանագրի դիտանցման հարցերով կոմիտեն՝ ցանկացած խոչընդոտ դիտանցելու և լուծելու համար:
29.	Հեղինակության հետ կապված ռիսկ	Կառավարության համար հեղինակության հետ կապված ռիսկը՝ մրցույթի ընթացքում և (կամ) մասնավոր գործընկերոջ գործունեության ընթացքում:	100%	0%	0%-15%	Չափավոր	Ցածր որակավորում ունեցող մասնակցի ընտրությունը կամ գործարքի ոչ համապատասխան կառուցվածքը կարող են հանգեցնել ակնկալվող մակարդակները չբավարարող ծառայության մակարդակի՝ այդպիսով սահմանափակելով ծրագրի օգուտների իրացումը:	-	Գործարքի կոնկրետ մանրամասները նախագծելու և մրցութային գործընթացի ընթացքում աջակցելու համար ներգրավված անկախ խորհրդատվական կողմ:
Անհաղթահարելի ուժի ազդեցություն և այլ անկանխատեսելի իրադարձություններ									
30.	Անհաղթահարելի ուժի ազդեցությունը	Հանգամանքներ, որոնք դուրս են ողջամիտ	50%	50%	0%-15%	Բարձր	Ազդեցության աստիճանը կարող է տարբերվել՝	-	Նման ռիսկերը չեն կարող կանխատեսվել, թեև կարող

Թիվ	Ռիսկ	Ռիսկերի նկարագրություն	Ռիսկերի բաշխում		Հավա-նակա-նություն	Ազդե-ցություն	Ազդեցության նկարագրություն	Ռիսկերի ընդհանուր արժեք, ԱՄՆ դոլար	Ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններ
			Պետական	Մասնավոր					
		հսկողության սահմաններից					անհաղթահարելի ուժի ազդեցության կոնկրետ իրավիճակից կախված:		են մեղմացվել՝ 1. ճգնաժամերի կառավարման պլան կազմելու, 2. ապահովագրության, 3. պայմանագրում անհաղթահարելի ուժի ազդեցության համապատասխան դրույթներ ներառելու, 4. մասնավոր գործընկերոջ կողմից համապատասխան ապահովագրության և գործունեության շարունակականության պլանավորման (վթարային վերականգնման պլանավորման) միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ